# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (21դասաժամ) թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը: Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև1)
- Մեկ լուսանկար3/4 չափի
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ ( դիպլոմ )
- անձը հաստատող փաստաթուղթ
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև5 )
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում է: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ հունվարի 12-ից մինչև հունվարի 25-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա հունվարի 31-ին ժամը 13:00-ին, ՀՀ Շիրակի մարզի «Ջաջուռ կայարանի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցե՝ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Ջաջուռավան 1փ., 32 տնակ:
Տեղեկությունների համար զանգահարել (093) 929967 հեռախոսահամարին: